բու չինեաց զմեծ և զհոյակապ տաճարս զայս, զոր «զարմացուցիչ տեսողաց», կոչէն հինքն, այլ յետ ոչ բազմաց կործանեցին Հագարացիք նախանձաբեկք։ Այս ամենայն սրբութիւնք և աթոռ կաթուղիկոսական 'ի սկզբանց դարձին Հայոց 'ի Քրիստոս և ցայսր ձգեն յԷջմիածին ամի ամի ուխտաւորս և նուէրս ուխտից. բայց յանհաւատացն բռնութենէ և յասպատակէ բաղում անգամ կողոպտեալ և տառապեալ աթոռոյն՝ յապահովանայ արդ ընդ Ռուսաց իշխանութեամբ յետ վերջին պատերազմին Պարսից։

134. Ի դաշտին Վաղարշապատու են իբրև 40 գեօղք և վանորայք անուանիք. յորոմք յարևմտակողմն կամ յաջմէ Քասաղայ և 'ի հիւսիսոյ մայրավանացն, յորս գլխաւորքն են Օշական գիւղ յարևմտից հիւսիսոյ երկիժամաւ հեռի. առ կարմրադոյն չէջաքար ափամբ Քասաղայ, որ Առապարն Օշականայ կոչիւր առ նախնեաք. անդ եհար Վահան Ամատունի զհէնն հիւսիսոյ ակն արկանելով յեկեղեցիս Կուսանացն, և ընկալաւ զգեօղն 'ի պարգևի մասին 'ի խոսրովայ յորդւոյն Տրդատայ, և Ժառանգ իւր միւսն Վահան Ամատունի՝ անդ հանդոյց զմարմին մեծին Մեսրովպայ, ուր և կայ ցարդ ընդ փայտաձաձուկ յարկաւ նորոգեալ եկեղեցւոյն. առ որով են և աւերակք, զոր ապարանս և մահարձանս շիրմի քաջին Վահանայ ասեն։ — Ի հարաւոյ մոտից Օշականայ կայ փոքրիկ լճակ Աղբր-Ելոլ անուն։ — Ժամաւ յելից հիւսիսոյ Օշականայ է Աղաբուն գիւղ, ուր երեք եկեղեցիք են շինեալք կամ նորոգեալք յԺԳ դարու, և խաչվէմք դամբանաց. և կամուրջ քարաշէն եռակամար, նման սմին և յՕշական գոյ։ Ի գեղջէ ասի է այժմեան ծերունի կաթուղիկոսն Հայոց Տէր Ներսէս։ — Կիսաժամաւ 'ի հիւսիսոյ Աշտարակայ 'ի սաբահարթի գեղոյն կայ Մ-ղի գիւղ, յորում եկեղեցի Ս. Գէորգայ, որոյ նշխարք փոխադրեցան 'ի Յովհաննավանից յեկեղեցի սորա մեծ և հոյակապ, առ որով կայ և մենաստան վայելուչ և պարսպապատ։

Կիսաժամաւ ևս 'ի սորա հիւսիսոյ կան Յովհաննաշնոտ, ռամկօրէն Հանենավանք, մեծ և անուանի, այլ լքեալ. շինեալ նախ 'ի Լուսաւորչէն և Սիոնի կամ Սիոնի վանք կոչեցեալ զառաջինն, նորոգեալ 'ի Մեծէն Ներսիսէ, և ապա 'ի Զ և յԺԳ դարս և յԺԴ. ունի արձանագիրս յոլովս զնորոգութենէն և զնուիրատուաց. յեկեղեցւոջ սորա աւանդի պահեալ Վարշամակին Քրիստոսի և այլոց նշխարաց սրբոց. յայս վանս դադարեաց առ վայր մի Ս. Վահան Գողթնացի յԸ դարու։ Ի սկիզբն անցելոյ դարուն Զաքարիա Սարկաւագ պատմիչ սրար զստորագրութիւն վանացս. որ և խաչ 'ի վերայ դրան եկեղեցւոյն ասէ կանգնեալ 'ի Լուսաւորչէն 'ի չափ իւրոյ հասակին։ — Մերձ է 'ի Մուղնի Սերգիս-ի գիւղ, ուր ապանաւ Վասակ Պահլաւունի հայրն Գրիգորի Մագիստրոսի։

135. Ի հիւսիսոյ Յովհաննավանուց կայ Կարբի գիւղ, բնակեալ 'ի գաղթականէն Պայեզիտոյ 100 տամբք. են և 'ի սմա աւերակք յոլովք հնգեքումբ եկեղեցեօք։ — Կիսաժամաւ յարևմտից Կարբոյ կայ Ռ-ի գիւղ, ուր եդն Ս. Մեսրովպ զնշխարս սրբոյն Սարգսի զօրավարի, և անուանի ուխտ եղև, որում առաջնորդ կայր 'ի կէս ԺԷ դարու Ոսկան վարդապետ տպագրիչ. այժմ ծածկեալ կան նշխարքն փլածով եկեղեցւոյն յամին 1827 'ի սասանութենէ մեծի. կանգուն կայ գաւիթն նորոգեալ յամին 1264։

Ի հիւսիսոյ Կարբոյ առ խորաձորով Քասաղայ կան եկեղեցիք հնացեալք Սաղմոսավանից կամ Ս. Սիոնի, այլ վանքն աւերեալ են իսպառ։ Յերեսս խորաձորոյ գեղոյն հատեալ են քարանձաւք գԺուարամուտք յոյժ, տեղիք ապաւինի և պահպանութեան գանձուց, որպէս ասի։ — Միւս ևս մենաստան անուանի է յԵղիշէրդ գեղջ յելից Կարբոյ և Մուղնոյ ընդ մէջ Քասաղայ և Հրազդանայ. ասի էր Մովսէս Բ կաթողիկոս, որ հաստատեաց զՑուամարք և զքուական Հայոց յամի Քրիստոսի 552. Նշանաւոր է եկեղեցի գեղջս եռայարկ, կամ երեք եկեղեցիք մի զմիով. մենաստանն քայքայեալ կիսաժամաւ հեռի կայ 'ի հարաւային ոստ լերինն Արայի, և հոյակապ ուխտանկիւնի բոլորակ եկեղեցին շինեալ 'ի Գրիգորէ Մամիկոնոյ յԺ դարու, որոյ գմբեթն անսիւն անկեալ է կիսով չափ։ Դաշտավայր է զգիւղն, յորում ահեղ և զարմանալի պատերազմունք մղեցան, նախ Արայի և Շամիրամայ իբր 3850 ամաց յառաջ քան զմեզ. և յետ 2600 ամաց 'ի սկիզբն Ի դարու՝ յունական զօրացն Փոկասայ կայսեր ընդ Պարսից. և դարձեալ զկնի 1100 և աւելի ամաց՝ Թահմազայ կամ Նասրը շահի ընդ Օսմանեանց։ — Ի հարաւակողմն Էջմիածնայ գեօղ անուանի է Զէյվա, 'ի մոտ Մեծամորի, 60 հայաբնակ տամբք։

136. Բ. ՍՈՒՐՄԱՌԻ կամ ՍԻՒՐՄԷԼԻ գաւառ 'ի հարաւոյ Երասխայ կայ և Սարատարապատու, և յայլոց կողմանց սահմանս ունի զՕսմանեանն և զպարսիկ Հայաստան. արևմտեանն մասն է ՃԱԳԱՏՔ գաւառ, յորում են Բարդողլերինք Թաւալեռ և Քէօրօղլու կոչեցեալք յայլազգեաց, 8980' բարձր, և 'ի հարաւոյ Սինէկ տաղ անջրպետ Պայեզիտոյ. իսկ արևելեանն մասն ՄԱՍԵԱՑ ՈՏՆ է։ Արևմտեանն մասն ՏԱՐԱՌԷՆՏ կոչի, յելից Կաղզուանայ, և բնակեալ է 'ի Թաւթարաց 28 գիւղից. միջակողմն բուն ՍԻՒՐՄԷԼԻ, յորում են գեօղք 50, և բազմաբնակք հայութեամբ, զի են 'ի նոսա իբրև 9000 ոգիք։ Գլխաւորքն շինիցն են, յարևմտակողմն՝ ԿՈՂԲ կամ ՔՈՒԼՊ աւան, հայրենիք Եղնկայ Թարգմանչի յատակաբան իմաստասիրի, յարևելեան հիւսիսային ստորոտս Բարդողլերին, 'ի ձև շրջանաթաւեր կաւակերտ տամբք և աշտարակաք, 'ի խաղս Վարդանդ վտակի, բնակեալ 'ի 180 հայ գերդաստանաց, յերի աւերակաց հնոյ քաղաքաւանին. ուր մնացուածք կՃեայ եկեղեցեաց և բնակարանաց, որք առ Հերակլիս կայսերբ և Եղնիս կաթուղիկոսիս թուին շինեալք. սմա շնորհեալ էր կայսրն զանուանի Աղանաս Կոչիայ, որ և Աղաթ. և է լեառն աղի 'ի մնարս Բարդողի յելից կուսէ աւանին երկայնեալ 'ի Շնորհ գիւղ. երեք կարգք են խաւ 'ի խաւոյ աղից, անջրպետեալք աղդ աղդ և գոյնագոյն կաւաքարօք. հոսանք Վարդամարգայ և խլրամունք երկրի զկէս լերինն փորացուցեալ են և հովիտ յարդարեալ, և մասն մի հատեալ է յանձաւս անձաւս յաղահատիցն, զոր